The modern territory of Armenia is a unique conservation area, the keeper of geological information. Studying the geological monuments of nature and selecting the most valuable objects can inevitably lead to a study of the history of the earth and the geological heritage of Armenia. The list of Armenia's most striking geological monuments includes Mount Aragats, columnar basaltic units in the gorge of the Arpa River, Dzhraber Pearlite Deposit, Areni 1 karst cave, East Lcharar Volcanic Cone, Gnishik River Canyon, Amagu-Gnishik Brahiantiklinal, gigantic Nummulites which can be found in Eocene calcareous sandstones near the Azat village. Among the mineral sights, one can note agates on the bentonite clay deposit near Ijevan, obsidian on the slopes along the Yerevan-Sevan road. Separately, it should be noted turquoise from the Teghut field. In the group of geological hazardous phenomena, landslides of Dilijan and Vokhchaberd can be noted. Of the many mineral waters you can offer Jermuk and Arzni. Among the petrographic

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

outcrops, travertines in the Ararat marz. Especially protected territories occupy a special place in nature management, among them geological monuments have special significance as especially fragile formations of natural heritage. It should be specially noted all the dangers that threaten geological formations, both of a natural nature (mudflows, landslides, earthquakes, rockfalls, forest and steppe fires, etc.) and human activities (construction, mining, waterworks, archaeological excavations, etc.). Given the importance of preserving evidence of geological history and the uniqueness of geological monuments, close attention and the development of a set of measures to protect territories are necessary. Preservation of natural geological monuments can ensure the further development of geotourism in Armenia. Geological monuments can become one of the calling cards of Armenia for attracting tourist flows, from different countries like professional geologists and amateurs, both adults and youth. Geotourism can combine elements of mountain, extreme and adventure tourism using also cultural heritage sites and with its versatility can attract the attention of mass tourism experts.

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

«ԴԻԼԻՉԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ

Ալիխանյան Ռ.

ՀՀ, ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 2, էլ. հասցե: robalikh@gmail.com

«Դիլիջան» ազգային պարկը որպես պետական արգելոց, հիմնադրվել է 1958 թվականին: Օրենսդրական հակասությունները վերացնելու և բնապահպանական և բնօգտագործման գործառնությունները ներդաշնակելու նպատակով 2002թ ՀՀ կառավարության կողմից փետրվարի 21-ի թիվ 165 որոշմամբ՝ «Դիլիջան» պետական արգելոցի կարգավիճակը փոխվում է «Դիլիջան» ազգային պարկի: ԴԱՊ-ը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելքում, հիմնականում Տավուշի մարզում, փոքր հատվածներով նաև՝ Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Ծովի մակերևույթից բարձր է 1000-2200մ.: «Դիլիջան» ազգային պարկի կազմակերպման հիմնական նպատակն է ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության պահպանումը, համահունչ տնտեսական զարգացումը, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության պահպանությունն Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Ազգային պարկի 33,765 հա տարածքը բաժանված է 3 ֆունկցիոնալ գոտիների՝ արգելոցային գոտի, ռեկրեացիոն գոտի, տնտեսական գոտի: Տարածքը բաժանված է 5 տեղամաս-մասնաճյուղերի՝ Դիլիջան, Շամախյան, Գոշ, Հաղարծին, Աղավնավանք: Պարկն ունի լավ հնարավորություններ էկոտուրիզմի և բնապահպանական կրթության զարգացման, ինչպես նաև ժամանցի (ռեկրեացիայի) կազմակերպման համար: Կարող են կազմակերպվել նաև գիտակրթական այցելություններ: «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Ֆլորան ընդգրկում է 51-ը ծառատեսակներ, 47-ը՝ թփեր, 696՝ բազմամյա խոտաբույսեր, 176՝ միամյա և երկամյա բույսեր, 7՝ մակաբույծներ: Նշված տեսակներից 32-ը հանդիսանում են ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված տեսակներ, 54-ը՝ դեղաբույսեր, 41-ը՝ ուտելի և 5-ը՝ Հայաստանի էնդեմիկ բուսատեսակներ: «Դիլիջան» ազգային պարկի

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

տարածքում և շրջակայքում հայտնաբերվել են 480 մակրոսկոպիկ սնկերի տեսակներ և ենթատեսակներ, որոնցից 176 տեսակը համարվում են ուսելի սնկատեսակներ: Պարկի ֆաունան ունի հարուստ տեսակային կազմ: Այն ընդգրկում է կաթնասունների 49, թռչունների 147, սողունների 19, երկկենցաղների 5, ձկների 9 տեսակներ:

«Դիլիջան» ազգային պարկն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն: Ամենանշանակալից մշակութային հուշարձաններն են Հաղարծնի վանքը (10-րդ 13-րդ դդ.), Գոշավանքը (12-13-րդ դդ.), Ջուխտակ վանքերը (11-րդ 13-րդ դդ.), Մաթոսավանքը (10-13-րդ դդ.), Աղավնավանքի եկեղեցին (11-րդ դ.): «Դիլիջան» ազգային պարկը ներկայումս ունի տարբեր բարդության և երկարության քայլարշավային թվով 23 և հեծանվային 1 երթուղիներ: Գրեթե բոլոր երթուղիներում տեղադրված են կողմնորոշիչ և տեղեկատվական ցուցանակներ: Որոշ երթուղիներում կառուցված են սանահանգույցներ, կամուրջներ, տեղադրված են աղբամաններ: ԴԱՊ-ն իր այցելուներին վարձակալությամբ կարող է տրամադրել վրաններ, քնապարկեր, հեծանիվներ, հեռադիտակներ, կողմնացույցեր, ձեռնափայտեր և այլ պարագաներ:

ԷԿՈԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ

Ավագյան Մ.

ՃՀՀԱՀ դոցենտ, avagyan_mariam@yahoo.com

Վայոց Ձորի մարզը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է՝ հարուստ կենսաբազմազանությամբ, բուսական և կենդանական աշխարհների յուրօրինակությամբ, երկրաբանական և լանդշաֆտային օբյեկտների գիտաճանաչողական բարձր արժեքներով, առողջապահական ռեկրեացիոն ակնառու նախադրյալներով, որոնք շատ կարևոր են էկոլոգիական երթուղիների մշակման համար: Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

Է քանակական և որակական աճ: Վայոց Ձորի մարզում ոլորտի դինամիկան դեռևս համահունչ չէ Հայաստանի զարգացումներին և երկրում ոլորտի զարգացմանը զուգընթաց կարևորվում է Վայոց Ձորի մարզում առկա զբոսաշրջային ներուժի հիման վրա զբոսաշրջության, մասնավորապես Էկոզբոսաշրջության զարգացման ապահովումը, որը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցում զգալի դեր կխաղա:

Գիտաճանաչողական և Էկոլոգիական տուրիզմի զարգացման տեսանկյունից կարևոր է մարզի լանդշաֆտային բազմազանությունը: Մարզին առանձնակի տուրիստական գրավչություն են հաղորդում լեռնային գետերի հովիտները, որոնք իրենցից ներկայացնում են յուրօրինակ բնական համալիրներ: Մեր հանրապետությունում Վայոց Ձորի մարզն ամենահարուստն է քարանձավներով:

Մարզի մի շարք լեռնագագաթներ ևս դասվում են բնական հուշարձանների շարքն ու օժտված են տուրիստական գրավչությամբ:

Տեղացի բնակչության էթնոմշակութային առանձնահատկությունները կարող են խթան հանդիսանալ, մասնավորապես, էթնոտուրիզմի՝ կենցաղի ու տնտեսվարման առանձնահատկություններին ծանոթանալու նպատակով իրականացվող ճանապարհորդությունների զարգացման համար: Վայոց Ձորում տուրիստական հետաքրքրություն ու կարևորություն կարող են ստանալ ավանդական այգեկութը (խաղողի բերքահավաք), մեղվաբուծությունը, հացի թխումը (լավաշ, Արենիի ավանդական գաթա և այլն), չրեդենի պատրաստումը, գինեգործությունը:

Գյուղական կոլորիտի, ապրելակերպի նկատմամբ տուրիստական հետաքրքրության առկայությունը Վայոց Ձորի մարզում (մասնավորապես գյուղական բնակավայրերում) տուրիզմի կազմակերպման ընտանեկան տարբերակի զարգացման լայն հնարավորություն է ընձեռում (զբոսաշրջիկները հյուրընկալվում են կոնկրետ ընտանիքներում):

Մարզի բնությունն ու պատմաճարտարապետական հարստությունը տասնյակ տուրիստական երթուղիների կազմակերպման հնարավորություն է ընձեռում: Կարևոր է բովանդակային առումով

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

հարստացնել տուրիստական երթուղիները՝ չսահմանափակվել միայն բնական կամ պատմաճարտարապետական օբյեկտի այցելությամբ: Անհրաժեշտ է համադրել տուրիզմի զարգացման բնական, պատմաճարտարապետական և էթնոմշակութային նախադրյալները: Հնարավոր երթուղիներից այստեղ ներկայացնենք երկուսը՝

1. Երևան – Ագարակաձոր – Տերտերի գյուղ (Գնիշիկ) – Կարմիր քարանձավ – Գռավի կիրճ – Երևան,
2. Երևան – Հուսո լեռ – Եղեգիս – Ցաղաց Քար – Սմբատաբերդ – Արտաբույնք – Երևան:

ՀՆԷԱԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ,
ՆՈՐԱՍՏԵՂԾ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՀՆԷԱԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾԸ

Գաբրիելյան Ի., Պապիկյան Ա., Խաչատրյան Ս.


ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվ. Բուսաբանության ինստիտուտ, 0040, Երևան,
Աճառյան փ. 1, e-mail: botinst@sci.am

Հայաստանը գտնվում է Եվրոպայի և Ասիայի միջև՝ կենսաբազմազանության գլոբալ թեժ կետերից մեկում: Այստեղ է գտնվում նաև բրածո բույսերի ավելի քան 100 տեղավայր, որոնք ընդգրկում են հոլոցենից մինչև դևոն ընկած երկրաբանական ժամանակաշրջանները: Այսօր ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտում պահվում է մոտ 25000 միավոր բրածո օրգանիզմների դրոշմ և քարացուկ: Նախորդ տարիներին ինստիտուտում հիմնադրվել է բույսերի թանգարան, որի առաջին մասը կազմելու է հնէաբուսաբանության հատվածը:

Հայաստանի Հանրապետությունում և Արցախում մինչև այժմ ուսումնասիրված է բրածո բույսերի տեղավայրերի մի փոքր մասը միայն (Քարտեզ 1): Այստեղ տեղին է նշել, որ Հայաստանի բրածո բույսերի առաջին հավաքները 1850-ական թվականներին կատարել է գերմանացի երկրաբան, հրաբխագետ Վիլհելմ Հերման Օտտո Ֆոն Աբիլը: Բրածո

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

բույսերի հավաքները կատարվել են Ռուսահայաստանում (Արևելյան Հասստանում)՝ Արարատ լեռան հյուսիսային լանջերին: Նմուշների տեղավայրը այսօր գտնվում է Թուրքիայում (Արևելյան Հայաստանում), իսկ հավաքված նմուշները պահվում են Վրաստանում՝ Վրաստանի ազգային թանգարանում:



Քարտեզ 1. Բրածո բույսերի տեղավայրերը Հայաստանի Հանրապետությունում և հարակից տարածքներում:

Արարատ լեռան լանջին գտնվող այս տեղավայրից Հ. Աբիխը նկարագրել է բրածո բույսի գիտության համար նոր տեսակ՝ *Agavites araratica* Abich, 1857:

20-րդ դարի սկզբից Վ.Վ. Բոգաչևի, Ա.Բ. Շիշկինայի և Ի.Վ. Պալիբինի աշխատանքներով սկսվում է Սովետական Հայաստանի և Նախիջևանի բրածո բույսերի ուսումնասիրությունը:

Հայ մեծ բուսաբան, էվոլյուցիոնիստ Ա.Լ. Թախտաջյանի աշխատանքներով 1940-ականներին սկսվում է հնէաբուսաբանական ուսումնասիրությունների նոր փուլ: 1943 թվականին Հայաստանի

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

գիտությունների ակադեմիայի Բուսաբանության ինստիտուտում նա ստեղծում է Պալեոբուսաբանության և էվոլյուցիայի բաժին; հրատարակում հնէաբուսաբանական մի շարք արժեքավոր աշխատանքներ:

Տարեցտարի ՀՀ տարածքում և Արցախում բացահայտվում են բրածո տերևների, սերմերի, փայտերի նոր տեղավայրեր, շարունակվում է նմուշների գիտական հավաքը արդեն հայտնի տեղավայրերից:

Հայաստանի հնէաբուսաբանական տեղավայրերն են այցելում արտերկրի և Հայաստանի Հանրապետության մեծ թվով մասնագետներ: Տեղավայրերի ուսումնասիրությանն զուգահեռ նոր հնարավորություններ են բացվում գեոտուրիզմի զարգացման համար:

**ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄ. ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԸ**

Գրիգորյան Ա.

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Երևան, Տիգրան Մեծի, 17, e-mail: aspumuseum@gmail.com

Ինքնորոշման և ֆինանսավորման լրացուցիչ արտաբյուջետային աղբյուրների որոնման անհրաժեշտությունով պայմանավորված՝ 90-ականների վերջերին թանգարանները դարձան զբոսաշրջային ցուցադրության հիմնական վայրերից մեկը, որը և նախադրյալներ ստեղծեց գործունեության նոր ուղղության՝ թանգարանային տուրիզմի ձևավորման համար: Թանգարանային տուրիզմ էրևոյթը մեզանում ծագել է համեմատաբար վերջերս՝ 2000-ականների սկզբներին, այն ժամանակ, երբ թանգարանները, ինչպես և մշակութային այլ հաստատություններ, սկսեցին որոնել զարգացման նոր ուղիներ և դրամահավաքի նոր արտաբյուջետային աղբյուրներ, ներառյալ համագործակցությունը տուրիստական գործակալությունների հետ:

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

Թանգարանային տուրիզմը, ըստ էության, թանգարանների հատուկ գործունեությունն է կրթական տուրիզմի ոլորտում թանգարանային բնույթի տարբեր տուրիստական ապրանքի արտադրության և իրացման գործում (ցուցահանդեսների ստեղծում, ներքին և արտաքին էքսկուրսիաների կազմակերպում, թանգարանային խանութներ և այլն), ինչպես նաև որոշ դեպքերում կազմակերպում է տուրիստական գործընթաց (տեղավորում, սնունդ, տեղափոխում, տեղեկատվական աջակցություն և այլն):

Թանգարանային տուրիզմը հիմնված է թանգարանի գիտական, կրթական և այլ ավանդական հետաքրքրությունների շրջանակներում ընդգրկված տարածքների պատմության և մշակույթի համապարփակ ցուցադրման (լուսաբանման) գաղափարի վրա: Մշակութային հաստատությունների և տուր օպերատորների միջև հարաբերությունները ձևավորվում են փոխգործակցության, դասընթացների համատեղ կազմակերպման և համագործակցության այլ ձևերի հիման վրա:

Ակնհայտ է, որ թանգարանները զբոսաշրջության արդյունաբերությունում կզբաղեցնեն որոշակի տեղ, ինչն էլ կառաջացնի թանգարանի և զբոսաշրջության միջև փոխգործակցության բարդ խնդիրների մանրակրկիտ վերլուծության կարիք: Այս հարցում կարևորվում է թանգարանի և տուրիստական բիզնեսի միջև երկխոսության սկզբունքն՝ ինչպես փոխգործակցության ձևերի որոշման, այնպես էլ «լուսավորության» և «զվարճանքի» միջև անհրաժեշտ հավասարակշռության պահպանման առումով:

Թանգարանային տուրիզմի զարգացման գործում շատ կարևոր դեր է խաղում տարածքի ապրանքանիշը, բրենդը: Թանգարանային շուկայավարումը և կառավարումը ճիշտ կիրառելու ունակությունը կարող է մեծ թվով զբոսաշրջիկների ներգրավել:

ՀՀ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՄ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ
ՏԵՂԱՄԱՍԵՐ

Գրիգորյան Գ.

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ, Երևան, Բաղրամյան 24, E-mail: gayane347@gmail.com

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

Հայաստանում լեռնային գործը հայտնի է հին դարերից, որի մասին վկայում են հնագիտական բազմաթիվ գտածոները, հին լեռնային փորվածքների հետքերը, ինչպես նաև պղնձի, երկաթի, ոսկու և այլ մետաղների ձուլվածքները: ՀՀ հանքավայրերը կարևոր են ոչ միայն արդյունաբերության և գիտության զարգացման տեսանկյունից այլ նաև հետաքրքիր և գրավիչ են գիտա-ուսումնական և ճանաչողական էքսկուրսիաների համար: Ելնելով շատ երկրների բազմամյա փորձից ՀՀ հանքավայրերը ևս կարող են կայուն տուրիզմի զարգացման համար անփոխարինելի տեղամասեր հանդիսանալ:

ՀՀ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական, որից շահագործվում են շուրջ 400-ը: Հայաստանում հանդիպում են աշխարհում հայտնի համարյա բոլոր տեսակի ապարները: Հատուկ արժեք ու նշանակություն ունեն Հայաստանի տարածքում հրաբխային պրոցեսների արդյունքում առաջացած ապարները: ՀՀ ընդերքը հարուստ է նաև մետաղական օգտակար հանածոներով, հատկապես՝ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ծարիր, ինչպես նաև հազվագյուտ ու ցրված մետաղներով:

ՀՀ-ն ունի մեծ ներուժ երկրաբանական տուրիզմի զարգացման համար: Քննարկվում է «երկրաբանական և հանքարդյունաբերական տուրիզմի» հայեցակարգը, երկրաբանական և հանքարդյունաբերական ոլորտի հետաքրքրությունները, ինչպես նաև տուրիստական երթուղիների կազմակերպման պահանջները: Ընտրված հանքավայրերը և երևակումները ըստ հանքային տեսակի կառաջարկվեն որպես հնարավոր տուրիստական երթուղիներ: Երթուղիների ընթացքում կտրվեն հանքավայրի և օգտակար հանածոների մասին գիտա-հանրամատչելի տեղեկություններ:

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՍԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ԴԵՐԸ ՀՀ ԳԵՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գրիգորյան Գ.¹, Նազարեթյան Ս.²

¹ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ, Երևան, Բաղրամյան 24ա, e-mail: gayane347@gmail.com

² ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն, Գյումրի, Վ.Սարգսյան
5ա, e-mail: snaznssp@mail.ru

Երկրաբանական կառուցվածքով Հայաստանը ամենահետաքրքիր տարածքներից մեկն է: Այստեղ դիտարկվում է երկրաբանական դարաշրջանների գրեթե բոլոր շերտագրական կտրվածքները՝ սկսած վերին պրոտերոզոյի մետամորֆային թերթաքարերից ավարտած չորրորդական հասակի հզոր էֆուզիվներով ու ժամանակակից նստվածքներով: ՀՀ տարածքը, չնայած իր փոքր տարածքին, ունի բարդ և բազմազան երկրաբանական կառուցվածք, որի հետևանքով առաջացել են այնպիսի կառուցվածքներ, որոնցից շատերը եզակի են և ձևավորվել են երկրաբանական զանազան տարբեր գործընթացների արդյունքում: Այդ հուշարձանները ունեն գիտական, ուսումնաճանաչողական և գեղագիտական արժեք և կարող են հիմք հանդիսանալ տուրիզմի տարբեր ուղղությունների զարգացման համար: Ա. Ավանեսյանի, Է. Մալխասյանի, Ս. Նազարեթյանի 2000թ. տպագրած «Հայաստանի երկրաբանական եզակի հուշարձանները» զբոսաշրջիկների համար ուղեցույցում նշված են այդ հուշարձանները, տրված է դրանց լուսանկարներն ու նկարագրությունը, գտնվելու վայրը, ծագումը և այլ: Մենք փորձել ենք մատնանշել դրանց կարևորությունը տուրիզմի տարբեր տեսակների զարգացման համար, նշելով հեռանկարները և տուրիզմի կազմակերպման առավել ընդունելի ձևերը: Ակնհայտ է, որ շատ հուշարձաններ կարող են էականորեն նպաստել տուրիզմի մոտ 10 տեսակների զարգացման համար:

Հայաստանը հարուստ է բազմաթիվ հուշարձաններով: Դրանք ժայռապատկերներն են, քարանձավային քաղաքները, պալեոլիթի բնակավայրերի և հին քաղաքների պեղումների տեղամասերը, հնագույն

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

աստղադիտարանների և մետաղագործական կենտրոնների
մնացորդները: Այդ ամենը կնպաստի առաջարկվող ճանաչողական
երթուղիների միջոցով գեոտուրիզմի զարգացմանն ու նոր
զբոսաշրջիկների ընդունմանը Հայաստան:

**ԼԵՈՆԻԴ ԱՖԱՆԱՍԻՒ ՄՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԻ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԲՆԱՅԻՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ»**

Գրիգորյան Գ., Խումիզուրի Գ., Դավթյան Ռ., Ավագյան Ս., Սահակյան Ն.

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ, Երևան, Բաղրամյան 24^ա, e-mail: g.khomizuri@yandex.ru,
ruben.davtyan.1990@mail.ru, seda.avagyan.90@bk.ru,

Լրացավ Լեոնիդ Աֆանասիի Սպենդիարյանի 150 ամյակը: Անդրադարձ է
կատարված նրա անվան մրցանակին, մրցանակակիրներին և
Հայաստանում կատարած գիտական ուսումնասիրություններին:
Առաջարկվում են երկրաբանական արշավներ դեպի Արագած, Կոտայք և
Արմաղան լեռներ՝ «Հայկական հրաբխային լեռնաշխարհը» թեմայով,
հայտնի երկրաբաններ Լեոնիդ Սպենդիարյանի և Լևինտոն-Լեսսինգի
անցած ուղիներով: Լեոնիդ Սպենդիարյանի անվան մրցանակը,
երկրաբանական ամենանշանակալից մրցանակներից մեկն է, որը տրվել
է սկսած 1900թ-ից մինչ այսօր՝ ընդգրկելով 6 մայրցամաք և 17 երկիր:
Մրցանակով պարգևատրվել են 22 հայտնի երկրաբաններ, որոնց մասին
առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ԵԳԻ երկրաբանական
թանգարանում ցուցադրվող ինտերակտիվ քարտեզի միջոցով: Մրցանակը
շնորհվում է չորս տարին մեկ անգամ այն երկրի լավագույն երկրաբանին,
որտեղ տեղի է ունենում Միջազգային երկրաբանական կոնգրեսի
հերթական նիստը: Լեոնիդ ֆանասիի Սպենդիարովը ծնվել է 1869 թ.-ին
Կախովկայում (Ղրիմում): 1987 թ.-ին նա ընտանիքի հետ միասին
տեղափոխվել է Սիմֆերոպոլ: Լեոնիդը տարրական կրթությունը ստացել է
տեղի գիմնազիայում, որն ավարտել է 1889 թ.-ին: Այդ տարվա աշնանը նա

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

ընդունվել է Մոսկվայի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի բնական գիտությունների բաժին, 1894 թ.-ին կարմիր մեդալով ավարտել համալսարանը: Ուսումնառության տարիներին նա հրապուրվել է միներալոգիայով և այնպիսի հաջողությունների հասել, որ ռուս ականավոր երկրաբան Ֆրանց Յուլիչ Լեվինսոն-Լեսինգի առաջարկով մնացել է համալսարանում այդ ոլորտում գիտական հետազոտություններ կատարելու համար: Պատմական հայրենիքից հեռու ապրելով Լ. Ա. Սպենդիարյանը իր երկրաբանական հետազոտությունները նվիրել է Արագածի, Կոտայքի և Երևանի շրջակա մարզերի հրաբխային ապարների ուսումնասիրությանը: Նրա առաջին գիտական աշխատանքն այնքան գերազանց է կատարվել, որ 1895թ.-ին Դորպատի համալսարանի գիտական խորհուրդը նրան շնորհել է երկրորդ միներալոգիական գիտությունների թեկնածույի աստիճանը:

Լ.Ա.Սպենդիարյանը բարձրացել է Արագածի և Արարատի գագաթները: Նա ուսումնասիրել է նաև Արմաղանի (Գեղամա լեռների) հրաբխային արտավիժումները, տալով Հայաստանի լեռնային ապարների քարագիտական վերլուծությունը:

Հետագայում Լ. Սպենդիարյանի հիշյալ աշխատանքները հիմք են հանդիսացել ակադեմիկոս Լևինսոն Լեսինգի «Հայկական հրաբխային լեռնաշխարհը» աշխատության համար: Հեղինակը այս մասին նշում է. «Ներկա աշխատությունը կազմելիս բացի իմ սեփական հետազոտություններից ես օգտվեցի նաև Լ. Սպենդիարյանի չիրատարակված թեկնածուական դիսերտացիայի նյութերից, որտեղ տրված են ապարների մի շարք վերլուծություններ»: Լեոնիդ Աֆանասիի Սպենդիարյանի ողբերգական մահվանից 120 տարի է անցել, բայց նրա անունը և իր անվան մրցանակը ընդմիշտ պատմության մեջ է մնացել, այդ անունը կարող է հավերժանալ նաև Լոնիդ Սպենդարյանի ուսումնասիրությամբ երկրաբանական երթուղիներ իրականացնելով:

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԸ ԵՎ ԳԵՈՏՈՒՐԻԶՄԸ

Կիրակոսյան Թ.

«Սևան» ազգային պարկի ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոն, Ք. Սևան Սայաթ-Նովա 15
Էլ. հասցե. tamarakirakosyan@rambler.ru.

«Սևան» ազգային պարկը հիմնադրվել է 1978թ. և գտնվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության իրավասության ներքո: Այն բնության հատուկ պահպանվող տարածք է Գեղարքունիքի մարզում՝ Երևանից մոտավորապես 60 կմ. հեռավորության վրա: Ազգային պարկի տարածքը լճի հայելու հետ միասին կազմում է մոտ 147,343 հա, իսկ առանց լճի հայելու մոտ 22,585 հա: Պահպանական գոտու տարածքը կազմում է մոտ 343000 հա: «Սևան» ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական:

Արգելոցային գոտում թույլատրվում է միայն գիտահետազոտական աշխատանքներ և զբոսաշրջություն: Ցանկացած այլ կարգի մարդկային գործունեություն, որը կարող է խախտել բնության էկոհամակարգերի և օբյեկտների հավասարակշռությունը կամ վտանգել գիտական և մշակութային արժեք ներկայացնող օբյեկտների պահպանությունը խստիվ արգելվում է: Սևան ազգային պարկն ունի 4 արգելոցներ, 2 արգելավայր:

Արգելավայրային գոտին ներառում է գետերի գետաբերաններից սկսած 500 մ երկարությամբ հատուկ պահպանվող տարածքները, հազվագյուտ, անհետացման ենթակա կենդանիների, թռչունների, ձկների թվաքանակը մեծացնելու և դրանք ոչնչացումից փրկելու նպատակով:

Պարկի և նրա պահպանվող գոտու տարածքում առկա է պատմության և մշակույթի մոտավորապես 1500 անշարժ հուշարձաններ, որոնք գրավում են զբոսաշրջիկների, օտարերկրյա հյուրերի ուշադրությունը: Կից գործում է Այցելուների կենտրոնը, այն ունենում է տարեկան ավելի քան 5000 այցելու, որի զգալի մասը զբոսաշրջիկներ են: Առաջարկվող տուրիզմի ձևերը կարելի է բաժանել երկու գլխավոր տիպերի՝ հատուկ և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող: Հատուկ (նեղ մասնագիտացված) ձևերը

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

կարող են լինել ինչպես դասական տուրիստական ուղևորությունների, այնպես էլ հետազոտական արշավախմբերի տեսքով: Դրանց շարքին են դասվում վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտարկման՝ օրինակ թռչնադիտական, գետեկոլոգիական, գիտական, ճարտարապետական, ազգագրական և այլ տուրերը: Առաջարկվող ընդհանուր հետաքրքրության երթուղին բնության, մշակութային, արկածային, սպորտային և այլ գրավչություններ համատեղող ուղևորություններն են: Երթուղիները իրականացվում են հետիոտն, հեծյալ, դահուկներով, մեքենաներով: Այցելուները այցելում են այնպիսի գեղատեսիլ վայրեր ինչպիսիք են Բերդկունքը, Մեծեփի Կիկլոպյան ամրոցը, Ջիլի քարայրը, Նորատուսի խաչքարերը, Նորաշենի արգելոցը, Սևանի թերակղզու վանական համալիրը և այլն:

Ազգային պարկի տարածքում գործում են անվճար հանրային լողափեր, որտեղ կան հասարակության համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Գործում է անվճար բուժկետ, փրկարարական ջոկատի ծառայություն, կան հանդերձարաններ, ապահովված է հասարակության անվտանգությունը: «Սևան» ազգային պարկը ունի մշակված ծրագիր հանգստացողների առօրյան ավելի հետաքրքիր կազմակերպելու համար: Պարկին կից գործում է ցուցադրությունների սրահ, որտեղ ժամանակագրական կարգով կազմակերպված է ցուցադրություն: Ընդգրկում է Ք.Ա. 3-2-րդ հազարամյակներից (Լճաշենի պեղումներից հանված իրեր) մինչ մեր օրերը: Սրահում ցուցադրված են նաև պարկի բուսական և կենդանական աշխարհը, ձկների տեսակները (պահպանվում է Սևանի ամենամեծ իշխան ձուկը, որը կշռում է 16 կգ), ավազանի ընդերքը ներկայացնող ապարներ և ավազի տեսակներ:

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՈՏՈՒՐԻԶՄԻ և
ԷՔՍՏՐԵՄԱԼ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
Հարությունյան Լ.

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, Մերվիս բաժին,
Կայուն զբոսաշրջություն, e-mail: lil.harut1998@gmail.com

Հայաստանը լեռնային երկիր է՝ հստակ արտահայտված լեռնային
ռելիեֆով և գետային ճյուղավորված ցանցով: Ռելիեֆի առումով ՀՀ
տարածքը բաժանվում է 4 մարզերի՝ հյուսիսային ծալքաբեկորային
լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզ, հրաբխային լեռների
և սարավանդների մարզ, հարավային ծալքաբեկորային լեռների և
միջլեռնային գոգավորությունների մարզ, միջին Արաքսյան
գոգավորություն:

Այս չորս մարզերում էլ կարելի է իրականացնել և զարգացնել
գեոտուրիզմի մեկ այլ ուղություն՝ էքստրեմալ տուրիզմի ցամաքային
տեսակը:

Էքստրեմալ զբոսաշրջության զարգացման հնարավորությունները ՀՀ-
ում արդիական են, քանի որ գնալով զբոսաշրջության այս տեսակը
դառնում է ավելի ու ավելի տարածված: Աշխարհում գնալով աճում է
հետաքրքրությունը նոր տարածքների էքստրեմալ զբոսաշրջության
նկատմամբ, ավելանում է զբոսաշրջիկների թիվը, ովքեր ցանկանում են
փորձել զբոսաշրջության այս տեսակը գոնե մեկ անգամ: Զեկույցում
ներկայացվում է էքստրեմալ զբոսաշրջության համաշխարհային փորձը,
տեղայնացնումը ՀՀ-ի զբոսաշրջության ոլորտում: Ուսումնասիրվել են
մի շարք կարևոր հասկացություններ, համաշխարհային փորձը և այս
ոլորտում որոշ երկրների ունեցած հաջողությունները:

Առաջ քաշված խնդիրներն են՝ ուսումնասիրել էքստրեմալ
զբոսաշրջության հետ առնչվող հասկացությունները, համաշխարհային
փորձը այս ոլորտում, կատարել ուսումնասիրություն ՀՀ-ում,
համեմատել համաշխարհային փորձը տեղականի հետ, ուսումնասիրել
և վեր հանել այն հնարավորությունները, որոնք կարող են խթան

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

հանդիսանալ էքստրեմալ զբոսաշրջության զարգացման համար, ցույց տալ բնական և սոցիալ-տնտեսական գործոնները, որոնք կարող են նպաստել էքստրեմալ զբոսաշրջության զարգացմանը ՀՀ-ում, ուսումնասիրության արդյունքում նշել այն բացասական միտումները, որոնք խոչընդոտում են էքստրեմալ զբոսաշրջության զարգացմանը ՀՀ-ում:

էքստրեմալ զբոսաշրջության զարգացման համար բնական պայմանների առկայությունը դեռևս բավարար չէ, զարգացման համար անհրաժեշտ են մի շարք ենթակառուցվածքների ստեղծում և ֆինանսական ներդրումներ: ՀՀ-ում այժմ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք նպաստում են էքստրեմալ զբոսաշրջության տարածմանը և զարգացմանը: Վեր են հանվել ՀՀ-ի բնական, սոցիալ-տնտեսական նախադրյալների մասին տեղեկությունները, մատնանշվել ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունները էքստրեմալ զբոսաշրջության զարգացման վրա, առաջ քաշելով էքստրեմալ զբոսաշրջության ներկայիս վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում:

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Մանասյան Գ., Պետրոսյան Լ.

Եվրոպական համալսարան, Հայաստան, 0037, Երևան, Դավիթ Անհաղթի փող., 10/1-10/4 շենք, Էլ. հասցե: gor_manasyan@mail.ru

Վայոց Ձորի մարզը գտնվելով հարուստ նյութական և մշակութային ռեսուրսների արդյունավետ փոխկապակցվածության կենտրոնում կարող է հստակ քայլեր կատարել էկոզբոսաշրջության զարգացման ուղղությամբ: Զբոսաշրջության կառավարման համակարգում ճիշտ և արդյունավետ օգտագործելով առկա ռեսուրսները կարող ենք էկոզբոսաշրջության նկատմամբ ձևավորել մեծ պահանջարկ, նպաստելով գյուղական համայնքների կայուն զարգացմանը: Հիմնական

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

Խնդիրներն են՝ վերլուծել մարզի ընդհանուր էկոռեսուրսները, բացահայտել գյուղական համայնքներում և ԲՀՊՏ-ներում էկոզբոսաշրջության կազմակերպման և նոր ուղղությունների զարգացման հնարավորությունները: Եթե Վայոց Ձորը դիտարկենք որպես մեկ միասնական-ամբողջական դեստինացիա, որն առանձնանում է վայրի բույսերի և կենդանիների եզակի կենսաբազմազանությամբ, ապա կարող ենք ասել, որ մարզը հնարավորություն ունի զարգացնել էկոզբոսաշրջության այնպիսի տեսակներ ինչպես օրինակ,

- Վայրի բույսերի, թռչունների և կենդանիների դիտում
- Բույսերի և հատապտուղների դիտում (հավաքում)
- Ակտիվ հանգիստ և զվարճանք բնության գողտրիկ անկյուններում խփված էկոճամբարներում
- քայլարշավներ, լեռնամագլցում, հեծանվային, մոտոարշավներ և այլն:

Ավանդաբար Վայոց Ձորի մարզը առավել ընդունված է որպես մշակութային ուղղություն, վերջերս նաև էկոտուրիզմի հիմնական ուղղություն, որի հնարավորություններով առավել աչքի են ընկնում Արենի, Գնիշիկ և Խաչիկ համայնքները: Վերջիններիս հիման վրա էլ կատարելով մեր ուսումնասիրությունները փաստում ենք Վայոց Ձորի մարզում զբոսաշրջային ենթակառուցվածքը և նրա առանձին բաղադրիչները դեռևս գտնվում են կայացման փուլում և դրանց հետագա զարգացումն ու կատարելագործումը էական տեղ կունենա մարզում զբոսաշրջության տարբեր տեսակների և հատկապես էկոզբոսաշրջության զարգացման և սոցիալ-տնտեսական առաջընթացի համար: Զբոսաշրջային կազմակերպությունների կողմից էկոզբոսաշրջային նոր ուղղությունների մշակումը և գովազդը կմեծացնի շուկայի պահանջարկը՝ ապահովելով կայուն զբոսաշրջային հոսքեր: Վայոց Ձորի մարզի տարածքային կառավարման մարմինների աջակցությամբ էկոզբոսաշրջության զարգացումը կնպաստի շրջակա

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

միջավայրի պահպանմանը, գյուղական համայնքների բարեկարգմանը և կյանքի որակի բարձրացմանը: Առաջարկում ենք. բնության հատուկ պահպանվող տարածքներում մշակել զարգացման և կառավարման ծրագրեր և ապահովել դրանց իրականացումը համայնքների աջակցությամբ և մասնավոր սեկտորի ներգրավմամբ: Տեղական բնակչության ներգրավում զբոսաշրջության կրթության և կարողությունների հզորացման ընթացակարգերին: Աջակցել գյուղերի բնակիչների կողմից էկոզբոսաշրջությանը և գյուղական զբոսաշրջությանն ուղղված բիզնես գաղափարների իրականացմանը՝ իրազեկելով տարբեր դրամաշնորհային ծրագրերի մասին: Մարզում ներդնել էկոգյուղի մոդելը, որի նպատակը կլինի համայնքների զարգացման աջակցությունը, բնության օրգանիկ միջավայրի պահպանությունը:

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Մարտիրոսյան Լ., Մարզայան Ռ., Աբրահամյան Վ., Մարզայան Հ.

Շիրակի Մ. Նալբանդյանիանվան Պետական Համալսարան, 3126, Պարույր Սևակ փ. 4, ք. Գյումրի, Հայաստան, e-mail: mlevon2003@mail.ru

Շիրակի մարզում էկոզբոսաշրջության զարգացման համար կարևոր են բնության հուշարձանները: Դրանք բնական օբյեկտներ են, որոնք իրենցից ներկայացնում են բացառիկ գիտական կամ պատմամշակութային արժեքներ:

Պետք է ասել, որ Շիրակի մարզի տարածքում գրանցված հուշարձանները լիարժեքորեն չեն ներկայացվում հանրապետության զբոսաշրջային փաթեթներում: Բացի այդ՝ հաստատված ցանկի ոչ բոլոր հուշարձաններն ունեն ՀՀ օրենքով նախատեսված անձնագրեր: Հստակ տրված չեն բնության հուշարձանների սահմանները և պահպանման գոտիները:

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

Բնության պահպանության միջազգային միության “IUCN Protected Areas Category” ուղեցույցում բնության հուշարձանը դասվում է երրորդ կատեգորիային և սահմանվում է որպես տարածք, որն ունի մեկ կամ մի քանի բացառիկ առանձնահատկություն: Այն կարող է լինել ինչպես բնական, այնպես էլ՝ մշակութային:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի հոդված 1-ում «բնության հուշարձան հասկացությունը սահմանվում է որպես «... սահմանված կարգով առանձնացված գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտը: Շիրակի մարզի տարածքում մեծ հետաքրքրություն են առաջացնում երկրաբանական հուշարձանները: Սրանք առաջացել են երկրաբանական երևույթների արդյունքում (հրաբխականություն, խզվածքներ, շերտաշարժ և այլն): Երկրաբանական հուշարձանները կարող են լինել ինչպես առանձին, այնպես էլ ամբողջական համալիրներ: Երկրաբանական հուշարձանների մեջ առանձնանում են հրաբխային կառույցները, որոնք ներկայացված են լինում հրաբխային կոների, խառնարանների, լավային ծածկոցների և մի քանի այլ ձևերով: Տեկտոնական հուշարձանների շարքին են դասվում ծալքերը, բեկվածքները: Գեոմորֆոլոգիական հուշարձաններ են համարվում հողմնահարման և տեղատարման հետևանքով առաջացած ռելիեֆի յուրահատուկ ձևերը՝ կիրճերը, մնացորդային բուրգերը և կամուրջները, հողմնախորշերը, քարանձավները, բնական թունելները և կամուրջները, քարեքանդակները և այլն:

Առանձին խումբ են կազմում հնէաբանական հուշարձանները: Սրանց մեջ են մտնում կենդանիների և բույսերի բրածո մնացորդները:

Մեր կողմից ուսումնասիրվել են ոչ միայն ՀՀ կառավարության կողմից հաստատված բնության հուշարձանները, այլև մարզի տարածքում գտնվող բոլոր այն բնական առաջացումները, որոնք մեր կարծիքով կարող են հետաքրքիր լինել զբոսաշրջիկների համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
90-ԱՄՅԱ ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ**

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

Պողոսյան Գ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Տերյան -76
e-mail: gayanepoghosyan76@gmail.com

1929թ. Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի անատոմիայի ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Ս.Ս. Սմիթենսկու ղեկավարությամբ և նախաձեռնությամբ հիմնադրվում է Անատոմիական գիտաուսումնական թանգարանը:

1930թ. արդեն գործող թանգարանի վարիչ է նշանակվում Յու.Պ. Իզմայիլովը, որն իր աշխատանքային գործունեության ընթացքում պատրաստում է բազմաթիվ կենդանիների և թռչունների խրտվիլակներ, կմախքներ և այլ տարաբնույթ պատրաստուկներ:

1946-1964թթ. ընթացքում թանգարանի վարիչ է աշխատում Կ.Կ. Դալը: Նա պատրաստում է թանգարանում առկա բազմաթիվ հազվագյուտ կենդանիների, թռչունների խրտվիլակներ և մի շարք ներքին օրգանների պատրաստուկներ:

1965-1980թթ. համատեղության կարգով թանգարանի վարիչ է աշխատում Ռ.Ս. Հովհաննիսյանը: Նա ոչ միայն վերանորոգում է թանգարանում արդեն առկա ցուցանմուշները, այլև պատրաստում առյուծների, արջի, եղնիկի, օձի, կոկորդիլոսի և մի շարք թռչունների խրտվիլակներ, ինչպես նաև 1968թ.-ին կենդանաբանական այգում ապրած <<Վովա>> անվամբ փղի զուգընկերուհու՝ <<Տիկկի>> փղի և ընձուղտի կմախքները:

1980-1992թթ. ընթացքում թանգարանի պահպանման աշխատանքներն իրականացվել են ամբիոնի դոցենտներ Ռ.Ս. Մխիթարյանի և Ս.Խ. Կոբեյյանի կողմից՝ անատոմիայի ամբիոնի վարիչ Պ.Բ. Հարությունյանի անմիջական ղեկավարությամբ:

1994-2014թթ. թանգարանի վարիչ է աշխատել Ն.Խ. Գրիգորյանը: Նա վերանորոգել է վնասված թանգարանային նմուշները, նաև պատրաստել է տարբեր կենդանատեսակների և թռչունների նոր նմուշներ, ներքին օրգանների պատրաստուկներ:

2014թ.-ից թանգարանը ղեկավարում է Գ.Ա. Պողոսյանը:

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

Շուրջ 90 տարիների ընթացքում հավաքագրած ծավալուն նյութերը, որպես անգնահատելի արժեք, ներկայացված են թանգարանային բազմաթիվ և բազմաբնույթ ցուցանմուշների տեսքով. այն է՝ կենդանատեսակների, ձկների, երկկենցաղների, սողունների, թռչունների և կաթնասունների կմախքներ (360 հատ), խրտվիլակներ (250 հատ), օրգան-համակարգերին վերաբերող տարբեր բնույթի բազմաթիվ պատրաստուկներ (1585 հատ), ֆորմալինի լուծույթում սևեղված կենդանիների, թռչունների դիակներ, դիակամասեր, առանձին օրգաններ (1700 հատ), կաղապարվածքներ (մուլյաժներ) (250 հատ), հնագիտական նմուշներ (150 հատ), ախտաբանաանատոմիական պատրաստուկներ (450 հատ):

Անատոմիական գիտաուսումնական թանգարանը մշտապես իր դռներն է բացել ուսանողների, դպրոցականների, գիտական հետազոտություններ կատարողների, արտասահմանցի հյուրերի և, պարզապես, բոլոր այցելուների առջև:

Ցավոք, այսօր, թանգարանը, որն իր ցուցանմուշների քանակով և որակով առաջիններից էր ինչպես նախկին ԽՍՀՄ-ի, այնպես էլ Եվրոպական նմանատիպ թանգարանների շարքում, զրկվեց հատկացված շենքից և ներկայումս, ժամանակավորապես չի գործում: Հույս ենք փայփայում, որ օր առաջ 90-ամյա թանգարանը կունենա իր պատշաճ տեղը և կվերագտնի երբեմնի հմայքն ու փառքը:

ԿԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մահակյան Ն.¹, Ենգիբարյան Տ.²,

¹ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Երկրաբանական թանգարան, e-mail: nareksahakyan123@mail.ru

² Գեղանիստի միջնակարգ դպրոց, e-mail: tigran.yengibaryan@gmail.com

1925 թվականին չորս բացառիկ կանայք՝ Մարգարեթ Հարրիսոնը, Բլեյր Նիլսը, Գերթրուդ Շելբին և Գերթրուդ Էմերսոն Սենը հիմնադրեցին «Աշխարհագետ կանանց կազմակերպությունը» (ԱԿԿ) (“Society of Woman

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

Geographers”): Այս ճանաչված հետազոտողները ցանկանում էին համախմբել կանանց, ովքեր իրենց հետազոտություններում և նվաճումներում կիսում են միմյանց տեսակետներն ու հետաքրքրությունները, դաշտային աշխատանքներում իրականացնում են փորձի փոխանակումներ և խրախուսում են կանանց գործունեությունն աշխարհագրական ուսումնասիրություններում:

Վարչության ստեղծման վաղ շրջանում դեռևս բազում անհայտ տարածքներ ու երևույթներ կային, որոնք ուսումնասիրվում և հետազոտվում էին բնակչության տարբեր շերտերի կողմից, այդ թվում՝ վարչության անդամների: Աշխարհում օդային փոխադրումները նոր էին սկսել իրականացվել, երբ ԱԿԿ առաջին անդամներից մեկն՝ Ամելիա Էրհարթն (1897-1937) միայնակ իրականացրեց իր առաջին թռիչքն Ատլանտյան օվկիանոսի վրայով: Մարգարեթ Մեյդը հանդիսացավ արդի մարդաբանության ռահվիրաներից մեկը, իսկ Մերի Դուգլաս Լիքին Աֆրիկայում օգնեց բացահայտել Օլդովայի կիրճի հնագույն մարդկանց [1]:

Այսօր կազմակերպությունն ունի շուրջ 500 անդամներ և իր գործունեությունը ծավալում է հինգ առանձին խմբերով: Նրանցից առաջին խումբը հիմնադրվել է Նյու-Յորքում, այժմ կան ևս չորս ազգային խմբեր՝ Վաշինգտոնը (այստեղ է գտնվում շտաբ-գրասենյակը), Հարավային Ֆլորիդան, Չիկագոն և Սան Ֆրանցիսկոյի Ծովածոցի շրջանը [1]: Յուրաքանչյուր խումբ կազմակերպում է հանդիպումներ տարվա ընթացքում մի քանի անգամ՝ սեպտեմբերից մայիս ընկած ժամանակահատվածում, որպեսզի ծանոթանան խմբի անդամների կատարած աշխատանքներին, լսեն զեկույցներ անդամների և հյուրերի հետազոտությունների վերաբերյալ: Վարչությունն ունի նաև անդամներ ԱՄՆ տարածքից դուրս, 2018 թվականի դրությամբ՝ աշխարհի հինգ մայրցամաքների քսանյոթ երկրներում: Յուրաքանչյուր երեք տարին մեկ ԱԿԿ-ն կազմակերպում է միջազգային գիտաժողով: Այս հանդիպումների ժամանակ նրանք կարող են շնորհել ոսկե մեդալ, մրցանակ նշանակալի նվաճման համար կամ Ռոննի մրցանակ՝ հատուկ

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

հայտնագործությունների համար: Այս մրցանակին կարող են արժանանալ նաև այն կանայք, ովքեր ԱԿԿ անդամ չեն: Առաջինն այս մրցանակին արժանացել է Պոլլի Պենհեյլը՝ 2011 թվականին [2]:

1931-ին ԱԿԿ-ն իրականացրեց «Դրոշակակրի ծրագիրը», որի շրջանակներում մասնակիցները փոխադրեցին իրենց դրոշը Կիլիմանջարոյի գագաթից մինչև Անտարկտիդա և օվկիանոսի խորքերից մինչև տիեզերական տարածություն[3]: Աշխարհագետ կանանց վարչությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ կանայք կարող են, և իրենց մեծ ներդրումն ունեն աշխարհագրական և հարակից գիտությունների զարգացման բնագավառում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱԿՎ պաշտոնական կայք - <http://www.iswg.org/>
2. https://en.wikipedia.org/wiki/Society_of_Woman_Geographers
3. https://eps.wustl.edu/people/Mollie_Webb

ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սուրբիայան Ա.

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ, Մ. Բաղրամյան պող. 24 ա, e-mail: suqiasyananna@gmail.com

Երկրաբանական հուշարձանների պահպանության խնդիրը բավականին արդիական է: Բազմաթիվ երկրներում բնապահպանական միջոցառումները իրականացվում են հստակ և բավականին խիստ օրենքներով ինչպես պետական, այնպես էլ տեղային և միջազգային կազմակերպությունների մակարդակով: Իրականացվում են պետական ծրագրեր բնության ժառանգության պահպանման վերաբերյալ: Ստեղծվել է Երկրաբանական ժառանգության պահպանման Եվրոպական Ասոցիացիա (ProGeo), որի հովանու ներքո անց են կացվում մի շարք միջազգային կոնֆերանսներ, մասնագիտական հանդիպումներ, կազմվում է համաշխարհային ժառանգություն ներկայացնող օբյեկտների ցանկ:

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

Յունեսկոյի կողմից իրականացվող Unesco Global Geoparks Յունեսկոյի Գլոբալ Գեոպարկեր ծրագրի շրջանակներում այժմ առանձնացված են 147 գեոպարկեր 41 երկրներում: Յունեսկոյի գեոպարկերի հետ կապված աշխատանքը սկսվել է 2001թ-ին: 2004թ-ին, 17 եվրոպական և 8 չինական գեոպարկեր հավաքվելով Յունեսկոյի Փարիզի կենտրոնական գրասենյակում ստեղծեցին Գլոբալ Գեոպարկերի ցանց (Global Geoparks Network, GGN), որտեղ ազգային երկրաբանական ժառանգության նախաձեռնությունները անդամակցելով համագործակցության և փորձի փոխանակման գլոբալ ցանցին, ստացան որոշակի աջակցություն և շահույթ:

Հայաստանն աչքի է ընկնում բնական օբյեկտների և համալիրների արտասովոր բազմազանությամբ, որոնք բնապահպանական, ռեկրեացիոն և սոցիալ-տնտեսական բացառիկ արժեք են ներկայացնում: Մեր երկրում բնության հուշարձանների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը: Բնության հուշարձանների (կենդանի կամ անկենդան) պահպանության կարգը սահմանվում է յուրաքանչյուր բնության հուշարձանների համար կազմված անձնագրով, որտեղ նշվում է նրա անվանումը, դասակարգումը, նշանակությունը, նկարագրությունը, չափագրությունը, տեղադիրքը, կոորդինատները, զբաղեցրած տարածքը (պահպան. գոտու հետ միասին), պահպանությունն իրականացնող մարմինը և վերջինիս պարտավորությունները: ՀՀ տարածքում ընդհանուր առմամբ կան կառավարության կողմից հաստատված 232 բնության հուշարձաններ: Այս հուշարձաններից ընդամենը 29 բնության հուշարձան ունի անձնագիր, որոնցից՝ 15-ը՝ Տավուշի մարզում, 4-ը՝ Վայոց ձորի մարզում, 1-ը՝ Սյունիքի մարզում, 9-ը՝ Լոռու մարզում: Թվով 232 բնության հուշարձանները լիարժեք չեն ներկայացնում Հայաստանի տարածքում առկա կենդանի և անկենդան բնական համալիրների և առանձին օբյեկտների հարուստ բազմազանությունը: Մասնավորապես ՀՀ-ում գրանցված երկրաբանական հուշարձանների մեծ մասը ընտրվել է հիմնականում հաշվի առնելով երկու չափանիշ՝ ռեկրեացիոն (գեղեցիկ լանդշաֆտ, ռելիեֆի էկզոտիկ յուրահատուկ ձևեր, գեղեցիկ ժայռեր և այլն) և բուժական (հանքային,

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

բուժիչ աղբյուրներ): Առավել հազվադեպ բնության հուշարձանի առանձնացման հիմք է հանդիսացել գիտական արժեքը, որպես Երկրի բնական պամության ճանաչման առարկա: Խոսքը վերաբերվում է հազվագյուտ հանքայնացումներին, օգտակար հանածոների հանքավայրերին, ստրատոտիպային շերտագրական միավորներին: Հայաստանի երկրաբանական հուշարձանների մեծամասնությունը ունի բազմաֆունկցիոնալ ուսումնասիրության կարիք՝ սկսած նրանց ծագումնաբանության հստակեցման, միներալալիթոլոգիական կազմի որոշմամբ, վերջացրած նրանց տեղադիրքի ճշգրիտ կոորդինատային որոշմամբ և սահմանների չափազրմամբ և այլն:

**ՆԱԽԿԻՆ ԼՔՎԱԾ ՀԱՆՔԱՎԱՅՐԸ ԵՎ “ԷԿՈՖԱՐՄԻՆԳ” ՀԱՆԳՍՏՅԱՆ
ԳՈՏԻՆ**

Վարդանյան Կ.

Էկոֆարմինգ ՍՊԸ, ք. Արթիկ, Անկախության 15 շենք, բն. հ 4, e-mail: narvah@rambler.ru

Էկոֆարմինգ հանգստյան գոտին գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: Հանգստյան գոտու տարածքը նախկինում եղել է Արթիկի հայտնի տուֆերի հանքավայրը, որի արևելյան մասով անցնում է “Մողրովի ձոր” գետակը: Խորհրդային Միության տարիներին տուֆի հանքի անպատասխանատու շահագործման հետևանքով առաջացած հազարավոր խորանարդ մետրերի հասնող թափոնները լցվել են ձորը՝ խաթարելով ձորի և գետի էկոհամակարգը:

2013 թ-ին Էկոֆարմինգ ՍՊԸ-ն նախաձեռնեց ձորի շուրջ մեկ կիլոմետր ձգվող տարածքի և գետահունի մաքրման ու բարեկարգման աշխատանքները: Արդյունքում վերոնշյալ տարածքից հանվեց մոտ 3000 մ³ տուֆի թափոնների զանգված, գետահունը լայնացվեց 10-40 մետր՝ նպատակ ունենալով այն հասցնել բնական հունի լայնությանը: Բանտված ջրերը, որոնք հոսում էին մակաբացման ապարների տակով և կեղտոտված էին կենցաղային թափոններով, 1 կմ ընդհանուր տարածքում բացվեցին, ազատվեցին թափոններից: Գետի հոսունությունը կրկին

80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER

բերվեց բնական վիճակի: Այս հինգ տարիների ընթացքում կենսաբազմազանության և բնական ներդաշնակության վերականգնման համար մաքրված թափոններն օգտագործվեցին ձորի տարածքում տարբեր բարձրությունների վրա աստիճանաձև տեռասանների ստեղծման նպատակով: Դրանք հետագայում ծածկվեցին հողաբուսական շերտով, սնկվեցին շուրջ 1000 թուփ և սնկիներ, ցանվեցին բազմատեսակ ծաղիկներ:

Թափոններից ազատվեց նաև ձորի բազմաթիվ քարանձավներից մեկը: Կառուցվեց մոտ 500 մ² ջրավազանային տարածք, որտեղ ընկերությունը զբաղվում է մանր ծավալի ձկնաբուծությամբ: Բացի այդ, բնական քարից և փայտանյութից կառուցվեցին 6 բունգալոներ, տեղադրվեց թոնիր, որի արդյունքում տարածքը գեղատեսիլ և հարմարավետ տեսք ստացավ:

Շրջակայքում առկա է բրոնզեդարյա հնագիտական շերտ, որի պեղումների մի մասը կատարվել է նախորդ դարի 70-ական թվականներին: Հայտնաբերվել են բազմաթիվ թաղումներ տուֆերի շերտերում և մեկ իշխանական դամբարան: Արթիկի հրաբխային տուֆերի յուրահատկությունը նաև հետաքրքիր է տարբեր մասնագիտական շրջանակների, այդ թվում, երկրաբանների, հնագետների, աշխարհագրագետների դաշտային երթուղիների համար: Հանգստյան գոտի վերջին 5 տարիներին այցելել են մեր հայրենակիցների հետ մեկտեղ նաև տարբեր ազգերի ներկայացուցիչներ, որոնց համոզմամբ տարածքը կարող է ծառայել որպես էկոթանգարան:

КРАТКИЙ ОЧЕРК ИСТОРИИ ГЕОЛОГИЧЕСКОГО МУЗЕЯ ИМ.
ПРОФ. О.Т. КАРАПЕТЯН

Мелконян Р.Л.

Институт геологических наук НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24а, РА
e-mail: ramelk@sci.am

В 1937 г. по инициативе проф. О.Т. Карапетяна, в преддверии XVII сессии Международного Геологического Конгресса (Москва, 1937 г.) был создан Геологический музей, основу которого составила богатая коллекция образцов, собранная им в различных странах. В этой связи на прежнем здании Института (ул. Абовяна 20) был построен второй этаж, где и были размещены экспонаты музея. В 1944г, после кончины О.Т. Карапетяна (1943г), музею было присвоено его имя.

В настоящее время музей является единственной организацией в стране, где в централизованном порядке собираются, обрабатываются, экспонируются и сохраняются различные образцы из Армении и зарубежных стран. В музее хранятся более 15000 разнотипных экспонатов, которые представлены в шести основных разделах-стратиграфии и палеонтологии, региональной геологии, магматизма, новейшего вулканизма, полезных ископаемых, гидрогеологии и гидрогеохимии.

Богато представлена ископаемая фауна от позднего девона до пост плиоцена. Неизменный интерес у посетителей музея вызывает скелет трогонтериевого слона, восстановленный по его ископаемым фрагментам, обнаруженным в 1929г. в окрестности г. Гюмри.

В экспозиции музея представлен образец Сихотэ-Алинского железного метеорита (падение на поверхность Земли 12 марта 1947г.).

Раздел полезных ископаемых, представлен образцами месторождений основных рудных формаций-медно-молибден порфировой, золоторудной, полиметаллической, медноколчеданной, железорудной, в том числе одного из крупнейших мировых медно-молибден порфировых месторождений- Каджаранского, с уникальными по величине и огранке кристаллами молибденита.

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

Весьма широко представлены неметаллические полезные ископаемые-различные стройматериалы, диатомиты, перлиты, каменная соль, а также известные обсидианы и агаты.

В 1987г. американский коллекционер армянского происхождения Ара Дилдилян подарил музею одну из своих коллекций редких минералов, которая представлена в нынешнем, новом здании музея в специальной комнате носящей его имя.

В последние годы в деятельности музея осуществлены ряд важных нововведений. Создан экоклуб, в котором учащиеся школ различных возрастных групп знакомятся с геологией Армении, имеющимися экологическими проблемами, отмечаются природоохранные международные дни, организуются открытые уроки, экскурсии в различные районы с целью ознакомления с их природными ресурсами. Следует отметить, что сплоченный коллектив музея постоянно стремится надлежащим образом знакомить посетителей с особенностями геологического строения и минеральными ресурсами нашей небольшой по площади, но весьма интересной по своей геологии территорией Республики Армения.

**ОТЛОЖЕНИЯ СРЕДНЕГО-ВЕРХНЕГО ЭОЦЕНА И УСЛОВИЯ ИХ
ОБРАЗОВАНИЯ В РАЙОНЕ С. АЗАТЕК ЮЖНОЙ АРМЕНИИ.**

Закревская Е.Ю.¹, Айрапетян Ф.А.²

¹Государственный геологический музей им. В.И. Вернадского РАН, ²Институт геологических наук НАН Армении

Среди многочисленных и достойных внимания природных объектов Армении выделяется знакомый геологам разрез Азатек. Расположен он недалеко от одноименного села. В напластовании горных пород его составляющих отражена геологическая история этого региона. Путешественник, проехав серпантинном 5 км от г Вайк на юг попадает в межгорную уютную долинку. защищенную на юге склоном невысокой (около 200м) горы. Внизу, у дороги склон покрыт осыпью самых невзрачных камней, среди которых обращает на себя внимание «каменные монетки» и обработанные кусочки обсидиана (скребки). Поднимаясь вверх по склону, примерно на высоте 50 м мы видим

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

коренные отложения с этими монетками, которые относятся к ископаемым морским одноклеточным животным – фораминиферам, роду *Nummulites*. Ученые – палеонтологи по таким остаткам восстанавливают обстановки прошлых эпох, все события в природе (климат, характер бассейна или суши и населяющие их организмы). И здесь мы постараемся показать какой бурной была геологическая история (т.е. история нашей планеты) на этом маленьком ее кусочке в отрезке времени от 40 до 36 млн. лет назад.

Ранний бартон. Морской мелководный бассейн, его склон по которому неслись потоки воды с песком и раковинами морских в основном одноклеточных животных. Можно найти в самом низу склона, под дорогой в русле ручья и его склоне можно видеть песчаники с обильными нуммулитами вида *N. perforatus*.

Средний бартон. Бассейн стал глубже, на дне уже нет знакомых нам нуммулитид или кораллов, а есть остатки червей и раков в виде каменных трубочек – слепков их норок.

Поздний бартон. В это время активизировалась вулканическая деятельность, на склоне можно найти базальты с мелкими (3-4мм) кристалликами авгита, а выше (геологически значит позже) находим остатки кораллового рифа. По сегодняшним обстановкам мы в районе коралловых островов у Новой Зеландии!!! И наконец наиболее интересное время конца бартона – излияния базальтов прекратились, но на дне много вулканического пепла и кусочков вулканического стекла. Самое непонятное - несмотря на «дождь» пепла, на дне селились нуммулиты, моллюски и даже морские ежи (фиг.1), которые не переносят мутной воды. Именно из этих отложений многие любители камня собирают крупные раковины нуммулитов для продажи.

Эту неразгаданную обстановку еще можно разгадать, если не разрушать склон Ранний Приабон. Обстановка побережья с бурными водами, несущими с гор валунами и галькой в основном вулканических пород характерна для этого времени.

И снова тихое мелководье, райские острова субтропиков. Такой интересный разрез.

Бартон – ярус палеогена, отложения горных пород, образовавшихся за период времени от 41.3-38.0 Ма.

Приабон – ярус палеогена, отложения горных пород, образовавшихся за период времени от 38.0-33.9 Ма.



Фиг.1. Раковина двусторчатого моллюска и игла морского ежа на раковине нуммулита (*Nummulites lyelli*), диаметр раковина нуммулита 6 см.

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

Notes 

**80th ANNIVERSARY OF THE GEOLOGICAL MUSEUM NAMED AFTER HOVHANNES
KARAPETYAN, 1939-2019, YEREVAN, ARMENIA, 15-18 OCTOBER**

Notes 